ԲԱՌԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ԼԵԶՈՒԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՅԹԻ ԻՐԱՑՈՒՄ

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Ի. Դարի վերջին տասնամեակը, յատկապէս ԻԱ. դարը մարդկային հասարակութեան զարգացման մի ժամանակաշրջան է, որն առաւել լի է իրադարձութիւններով: ԽՍՀՄի փլուզումը, ԱՄՆի գերտէրութիւն դառնալը, Եւրամիութեան ձեւաւորումը, Արեւմուտքի դերի է՛լ աւելի կարեւորումը համաշխարհային պատմութեան մէջ, անհատական համակարգիչների յայտնաբերումը եւ համատարած կիրառումը, համացանցի գործարկումը, մարդկային հաղորդակցման նորանոր ձեւերի ու միջոցների ներդրումը հանրային կեանքում եւն. նոր մարտահրաւէրներ են ներկայացնում մարդկային լեզուին:

Դարասկզբից, տնտեսական եւ քաղաքական յարաբերութիւնների ձեւաւորմամբ պայմանաւորուած, ԽՍՀՄի նախկին ժողովուրդների բառապաշարի բազմաթիւ բառեր ու զանազան տարրեր դարձան հնաբանութիւններ ու պատմաբառեր՝ հոկտեմբերիկ, պիոնէր, կոմերիտական, շրջկոմ, սովխոզ, կոլխոզ, կուսբջիջ, պլանային տնտեսութիւն, հարուածային աշխատող, ստախանովական, սոցմրցութիւն եւն: Արեւմուտքը իր մշակոյթով, ազատ շուկայական տնտեսութեամբ, նոր տեսակի հասարակական-քաղաքական յարաբերութիւններով, աննախադէպ գիտատեխնիկական առաջընթացով, լայն սպառման ապրանքներով եւն. անհրաժեշտութիւն առաջացրեց այդ ժողովուրդների լեզուների բառապաշարում նախկինում գոյութիւն չունեցող բազմաբնոյթ նոր երեւոյթների, առարկաների, յարաբերութիւնների արտացոլումը: Լեզուների բառակերտական հնարաւորութիւնները օգտագործելով պէտք է կերտուէին նորանոր բառեր՝ ապահովելով լեզուի հիմնական՝ հաղորդակցական գործառոյթը, որը մարդկային հասարակութեան մաս կազմող անդամների համատեղ գործունէութիւնը պայմանաւորող կարեւորագոյն գործօն է:

Մարդը չի կարող ապրել ու ստեղծագործել առանց հաղորդակցման, տեղեկատուութեան փոխանակման, առանց դրա համար անհրաժեշտ միջոցներ՝ հաղորդակցման միջոցներ ունենալու: Լեզուի հաղորդակցական գործառոյթի ամենաբնորոշ արտայայտութիւնը խօսքային գործունէութիւնն է: Սա վայրկենական, անխափան, անդադրում եւ բաւականին բարդ երեւոյթ է եւ ունի լեզուաբանական, հոգեբանական, կենսաբանական, զգացական, փիլիսոփայական, հասարակական ընդգծուած ազգային եւ համամարդկային երեսակներ: Ի տարբերութիւն լեզուի, որը խօսողական ունակութիւնների

ընդհանրական համակարգ է տուեալ լեզուով խօսող հանրութեան իւրաքանչիւր անդամի գիտակցութեան մէջ, հաղորդակցումը լեզուի կենդանի գոյն է եւ կառուցւում է լեզուական համակարգի թելադրանքով ու դրան համապատասխան, իրացւում է գծային ձեւով ու եղանակով:

Հաղորդակցման գործընթացում անհատի հոգեֆիզիկական պայմաններով, ստեղծագործական կարողութիւններով, փորձով, հաղորդման նպատակադրումներով, մարդկային բազմաբովանդակ գործունէութեամբ պայմանաւորուած՝ լեզուակիրը վերարտադրում է գոյութիւն ունեցող լեզուական համակարգը: Լեզուն՝ իբրեւ մարդկային հաղորդակցման հիմնական միջոց, բառերի՝ բառային կազմի եւ բառապաշարի, ու համապատասխան քերականական կառուցուածքի համադրութեան ամբողջութիւն է: Սակայն լեզուն քարացած զանգուած չէ. լեզուակիրների խօսքային գործունէութիւնը ենթադրում է որոշակի շեղումներ՝ նոր բառերի, քերականական այլատեսակ ձեւերի գործածութիւն եւն., որոնք սկզբնապէս առաջ են բերում լեզուական անկանոնութիւն, սակայն յետագայում կարող են արմատանալ լեզուում՝ դառնալով լեզուական համակարգի օրինաչափութիւններ, օրինակ՝ գրէ՛ք (գրեցէ՛ք փոխարէն), գործադիր (գործադիր մարմնի, գործադիր իշխանութեան փոխարէն), ասուլիս (մամուլի ասուլիսի փոխարէն), շեմ (եղել է «շեմք» իմաստով, այսօր՝ «չափանիշների սահման»), շտեմարան («որեւէ բանի մեծ պաշար՝ հարստութիւն ունեցող բնագաւառ» իմաստով, այսօր՝ «առաջադրանքների, խնդիրների հաւաքածու, ժողովածու») եւն.: Իւրաքանչիւր լեզուի զարգացման օրինաչափութիւնների բացայայտումը եւ համակողմանի ուսումնասիրութիւնը մարդկային լեզուի հնարաւորութիւնների արձանագրումն է, իսկ դրանց արդիւնաւէտութիւնը՝ կախեալ է դրանց բազմակողմանի գործադրումից: Այս ամէնը լեզուաբանութեան կարեւորագոյն հիմնախնդիրներից են:

Հանրային կեանքի եւ մարդու գիտակցութեան մշտական կատարելագործումը լեզուի առջեւ նոր մարտահրաւէրներ է յարուցում՝ իրականացնել հաղորդակցումը մարդկային բազմաբեւեռ գործունէութեան բոլոր ոլորտներում, իսկ դա, մասնաւորապէս նաեւ, նոր հասկացութիւնների անուանումների ապահովումն է: Այս խնդիրներով զբաղուող լեզուաբանական գիտակարգը կոչւում է անուանագիտութիւն (onomasiology)[1], որի գլխաւոր նպատակն է բացայայտել առարկայական իրականութեան առանձին տարրերի անուանումների ձեւերի ու միջոցների քննութիւնը: Անուանագիտութեան հիմնախնդիրները՝ որպէս լեզուաբանական քննութեան առարկայ, առաջարկել են Պրահայի կառուցուածքային դպրոցի ներկայացուցիչները՝ Վիլէմ Մատեզիուսը, Բոգումիլ Տրնկան, իսկ 1950ականներից՝ նաեւ Միլոշ Դոկուլիլը: 1970-80ականներին անուանագիտութեանը վերաբերող լեզուական տեսական

խնդիրները բազմակողմանի քննութեան են արժանացել նաեւ ռուս լեզուաբաններ Վլադիմիր Գակի, Ելենա Կուբրեակովայի, Վերոնիկա Տելիայի (մոսկովեան լեզուաբանական դպրոց), ինչպէս նաեւ որպէս բառակերտական միջոց՝ Կուրսկ-Օռլովեան դպրոցից Իրինա Տորոպցեւայի աշխատութիւններում:

Սկզբնապէս անուանագիտութիւնը դիտւում էր որպէս մեթոդական ուղղութիւն, որը քննում էր լեզուն (աւելի ճիշտ՝ խօսքը) բովանդակութեան դիտուածքից դէպի արտայայտութեան դիտուածք՝ ի հակադրութիւն իմաստաբանութեան, որի քննութիւնը հակառակ ուղղուածութիւն ունի: Բայց շուտով ճշտուեց, որ նշուած քննութեան ուղղութիւնը լիարժէք բացայայտելու համար, այն՝ որպէս մեթոդական ուղղութիւն դիտարկելը, բաւարար չէ, եւ մինչխօսքային ու խօսքային գործունէութիւնների կազմակերպման ու ընկալման գործընթացները ոչ թէ մեթոդական մօտեցում են, այլ լեզուաբանական գիտակարգ, ինչպէս հնչիւնաբանութիւնը եւ բառագիտութիւնը:

Ի. դարավերջում եւ արդի ժամանակներում մեծ ուշադրութիւն է դարձւում նաեւ լեզուական անուանադրութեան հիմնախնդիրներին, որը անուանագիտութեան ենթակարգ է. բաւականին բարդ եւ բազմաբովանդակ լեզուական երեւոյթ, որի շատ խնդիրներ՝ տեսական ու գործառական տեսանկիւնից, յաւուր պատշաճի համակողմանիօրէն բացայայտուած եւ նկարագրուած չեն: Լայն առումով այդպիսի հիմնախնդիրներից են լեզուի՝ որպէս հաղորդակցման հիմնական միջոցի առաջացումը, մարդու եւ առարկայական իրականութեան, մարդկային մտածողութեան ու լեզուի բազմակողմանի փոխյարաբերութիւնները, մարդու եւ հասարակութեան, մշակոյթի ազդեցութիւնը լեզուական համակարգի վրայ:

Լեզուական միջոցները կոչուած են մարդու մտածական, հաղորդակցական, տեղեկատուութեան փոխանակման եւ այլ գործունէութիւնների պահանջները բաւարարելու համար: Լեզուի՝ որպէս հաղորդակցման հիմնական միջոցի գոյութեան անհրաժեշտութիւնը ենթադրում է նաեւ լեզուական նիւթական եւ զգայական ընկալելի նշանների համակարգերի ստեղծումը (բառեր, ազատ եւ կայուն բառակապակցութիւններ, զանազան նախադասութիւններ եւն.), որը հնարաւորութիւն կը տար մարդկանց հաղորդակցումը անխաթար ապահովելու համար: Սակայն լեզուական նշանների համակարգը մշտապէս կատարելագործւում ու լրացւում է նորանոր միաւորներով, որոնք ստեղծւում են նոր առարկաներ, իրավիճակներ ու երեւոյթներ անուանելու համար, պայմանաւորուած՝ մարդկային հասարակութեան մշտական զարգացմամբ:

Նեղ առումով լեզուական անուանադրութեան տեսական հիմնախնդիրներից է առարկայական, նաեւ վերացարկուած կամ ենթակայական

իրականութեան մէջ ի յայտ եկած նորանոր առարկաների, երեւոյթների եւն.ի անուանման (անուն տալու) միջոցների ու ձեւերի քննութիւնը:

ԲԱՌԸ՝ ՈՐՊԷՍ ԼԵԶՈՒԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՅԹԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ

Քանի որ բառը ամէնից առաջ ունի իմացաբանական՝ ճանաչողական արժէք, այսինքն՝ միջնորդաւորուած ուղղուածութիւն դէպի առարկայական իրականութիւնը, ապա սա պայմանաւորում է նրա անուանողական արժէքը՝ անուանողական գործառոյթը, որն է ուղղուածութիւն դէպի առարկայական իրականութեան արտացոլումը: Բառը մտածական, մասամբ էլ հոգեկան այլ արտապատկերման ցոլացումն է լեզուական արտայայտութեան մէջ: Մարդկային հասարակութեան հաղորդակցման աճող պահանջների բաւարարման անհրաժեշտութեամբ պայմանաւորուած՝ իւրաքանչիւր կենդանի լեզու իր պատմութեան ընթացքում ստեղծում եւ գործածում է բառակերտութեան տարաբնոյթ եղանակներ ու միջոցներ: Բառակերտութիւնը՝ նոր բառերի կազմումն ու ստեղծումը, լեզուական առաջընթացի կարեւորագոյն գործօններից մէկն է: Այդ ճանապարհով է ձեւաւորւում իւրաքանչիւր լեզուի բառապաշարը, որի տարրերի գործադրումով է մասնակիօրէն իրացւում լեզուի հիմնական՝ հաղորդակցական գործառոյթը: Բառապաշարի ընդհանուր տեսութիւնը բառագիտութեան կարեւոր եւ ծաւալուն բաժինն է, որը քննում է նրա տարբեր շերտերը, բառային կազմի կրած զանազան ու բազմաբնոյթ տեղաշարժերը, բառակերտութեան հնարաւորութիւնները, կիրառական տարաբնոյթ նշանակութիւններն ու գործառոյթները եւն.: Լեզուի բառային կազմը գիտական հետազօտութեան ընդարձակ ու պարարտ դաշտ է եւ այն կարելի է համակարգել տարբեր մեթոդներով ու եղանակներով: Իւրաքանչիւր լեզուի բառապաշար համակարգ է՝ պատմական զարգացման երկարատեւ գործընթացի արդիւնք: Իբրեւ բաց ամբողջութիւն՝ այն շարունակ ընդլայնում է իր սահմանները, զարգանում ու հարստանում:

Մենք կարեւորեցինք լեզուի զարգացման արդի փուլը, սակայն լեզուի ամէն մի փուլ կամ հատուած ունի իր պատմական կեանքին, հասարակական դերին ու գործառոյթներին, բնոյթին ու էութեանը համապատասխանող բառապաշար[2]: Լինելով կենդանի հաղորդակցման ծառայող միջոց՝ լեզուի բառապաշարը գտնւում է անընդհատ բարելաւման գործընթացում, ուստի եւ նրան, ինչպէս ամէն մի զարգացող երեւոյթի, յատուկ են զարգացման գործընթացի բոլոր իրողութիւնները՝ իրենց հակասականութիւններով, շեղումներով, զուգահեռութիւններով, հնի ու նորի, իր դարն ապրածի եւ զարգացողի տարրերի առկայութեամբ ու դրանց ներքին պայքարով, մերժելի եւ ընդունելի իրականութիւններով եւն.[3]: Իսկ

բառապաշարի բարելաւումը տուեալ լեզուի բառային կազմի ներքին զարգացումն է, որն ուղղուած է լեզուի մէջ գոյութիւն ունեցող բառերի իմաստային, գործառական, ձեւաբանական եւ բառակազմական յատկանիշների արդիականացմանը՝ լեզուի մէջ գործող զարգացման ներքին (ներլեզուական) օրինաչափութիւններին (օրինակ՝ ամփոփումը՝ աշխարհահայեացք-աշխարհայեացք, տաւարաարած–տաւարած) համապատասխան եւ արտաքին (արտալեզուական) գործօնների թելադրանքով[4] (օրինակ՝ փոխառութիւնները՝ տանդէմ, պոպուլիզմ, դոնոր եւն.):

Բառապաշարի հարստացման ներքին միջոցը հենց նոյն լեզուի հնարաւորութիւններով նոր բառեր կերտելն է, արտաքինը՝ ուրիշ լեզուներից կատարուող փոխառութիւնները: Բառապաշարի հարստացումը միայն այս երկու ուղիների պարզորոշ թուարկումը չէ. դա բաւականին բարդ ու տարաբնոյթ գործընթաց է, եւ սրանցով չեն սպառուում բառապաշարի կատարելագործման բոլոր դրսեւորումներն ու իրողութիւնները: Նշուածները բառային կազմի առաւել ակնյայտ լեզուական օրինաչափութիւնների ու փոփոխութեան միտումներ են:

Ամէն լեզու ունի բառակերտական համակարգի գերիշխող ենթատեսակներ, սակայն մարդկային բազմաբնոյթ գործունէութիւնը լեզուի առջեւ նոր պահանջներ է դնում հաղորդակցումը ապահովելու նպատակով, մասնաւորապէս իւրաքանչիւր լեզու բառապաշարի հարստացման նոր ուղիներ եւ միջոցներ է փնտռում, քանի որ բառակերտութիւնը երբեք չի դադարում կենդանի լեզուում՝ արտացոլելու մարդուն շրջապատող առարկայական իրականութիւնը, իսկ այս տեսակէտից բառակերտութիւնը ելնում է մարդու՝ հանրութեան մէջ ամէնօրեայ գործունէութեան անհրաժեշտութիւնից ու հաղորդակցման պահանջից: Միւս կողմից բառակերտութեան եղանակներն ու ուղիները կախուած են լեզուատիպից եւ աւելի շատ ներլեզուական երեւոյթներ են:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Հայերէնն էլ մարդկային լեզուի առանձնակի, մասնաւոր դրսեւորումներից է, իր դժուարին ու փառահեղ պատմութեամբ: Ուսումնասիրութիւններից պարզւում է, որ հանրութեան պատմահասարակական, հայերէնի լեզուավիճակի եւ բազմաթիւ այլ պայմաններից ելնելով՝ բառապաշարի հարստացման այս երկու ուղիները փոփոխակի յաջողութիւններով գործել են հայոց լեզուում: Սակայն, ըստ ուսումնասիրութիւնների[5] արդիւնքների՝ հայերէնի բառագանձի համալրման հիմնական աղբիւրը աւանդաբար եղել եւ մնում է ներքին միջոցը՝ բառակերտութիւնը, բառաշինութիւնը՝ իր ամբողջ համակարգային դրսեւորումներով[6]: Կան բառա-

կերտական եղանակներ, որոնք գործում են լեզուի որոշակի փուլում, տուեալ լեզուավիճակում (օրինակ՝ բառաբարդման տարբեր կաղապարների տեսակներ, յապաւում, միջածանցում). կան այնպիսիները, որոնք բնորոշ են մի քանի փուլերի եւ ժառանգորդաբար գործում են լեզուական նոր վիճակներում[7] (օրինակ՝ նախածանցում, վերջածանցում, բառաբարդում, բառապատճէնում): Պատմական փոփոխութիւնների հիմքի վրայ որոշ ուղիներ, ձեւեր ու միջոցներ հնանում են, դուրս են մղւում կամ գործածւում են մասնակիօրէն՝ իբրեւ ոչ-գործուն եղանակներ (քերականական ձեւերի քարացում, բազմիմաստ բառերի իմաստների հեռացում): Տուեալ լեզուավիճակում կարող են առկայ լինել ինչպէս կենսունակ, գործուն, այնպէս էլ ոչ-գործուն, ոչ-կենսունակ ուղիներ, ձեւեր ու միջոցներ (հայերէնի արդի փուլում համարեա բոլոր վերոնշեալ տեսակներն էլ գործում են):

Հայ լեզուաբանութեան մէջ բառապաշարի հարստացման հիմնական եղանակը համարւում է բառակազմութիւնը, որի ուսումնասիրութեամբ զբաղուող բառակազմագիտութիւնը քննում է բառեր կազմելու եղանակներն ու միջոցները, բառակազմական կաղապարները: Որոշ լեզուաբաններ բառակազմագիտութիւնը մտցնում են ձեւաբանութեան մէջ:

Բառակազմութիւնը դիտարկւում է ինչպէս պատմական, այնպէս էլ համաժամանակեայ հայեցակէտով: Հայ լեզուաբաններից շատերը հայերէնի բառակազմութեան եղանակներ են համարում **ածանցումը** (նախածանցումը, միջածանցումը, վերջածանցումը, բարդութեան ածանցումը՝ բարդածանցումը), երբ բառ է կազմւում՝ հիմքերին աւելացնելով բառակազմական ձեւոյթներ, **բարդացումը** (յարադրութիւն, կրկնութիւն, կցում), երբ բառ է կազմւում հիմնական ձեւոյթների կամ առանձին բառերի բաղադրութեամբ, **յապաւումը**, երբ սկզբնահնչիւնների, բառերի մասերի եւ այլ միջոցներով բաղադրեալ անուններից կազմւում են բաղադրութիւններ: Որոշ լեզուաբաններ որպէս բառակազմութեան եղանակ են առանձնացնում նաեւ **քերականական ձեւերի քարացումը**, երբ հին լեզուավիճակների որոշ քերականական ձեւեր յետագայում վերածւում են կայուն, անտրոհելի կապակցութիւնների, բարդութիւնների եւ գործածւում են իբրեւ բառի ուղիղ, ինքնուրոյն ձեւեր (*շնորհիւ, հարկաւ, նաեւ*), նաեւ **բազմիմաստ բառերի իմաստների հեռացումը**, երբ բազմիմաստութիւնը տրոհւում է, եւ իմաստներից որեւէ մէկի մեկուսացումը, հեռացումը յանգեցնում է նոր, ինքնուրոյն անկախ բառիմաստի հաստատման, նոյնանունների գոյացման[8]: Այդպիսին են, օրինակ՝ գործարար (եղել է «գործամոլ, գործարքարար» իմաստով՝ որպէս անյանձնարարելի բառ, այսօր՝ համարժէք է «բիզնէսմէն» փոխառեալ բառին), այր (եղել է «տղամարդ», «քաջ» իմաստներով, այսօր՝ պետական այր, քաղաքական այր կայուն բառակապակցութիւններում՝ «պաշտօնեայ» իմաստով), ատենախօս (եղել է

«հոետոր» հնացած իմաստով, այսօր համարժէք է «դիսերտանտ» փոխառեալ բառին), աֆղանցի (եղել է «Աֆղանստանի բնակիչ» իմաստով, այսօր՝ «աֆղանական պատերազմի մասնակից զինուոր»), փաթեթ (եղել է «որեւէ առարկայի փաթաթուածք» իմաստով, այսօր նաեւ՝ «փոխկապակցուած դրոյթների, հարցերի խումբ»):

Մենք յստակօրէն տարբերակում ենք **բառակերտութիւն, բառակազմութիւն, բառաստեղծում** եզրոյթները: Մեր մօտեցմամբ՝ բառակերտութիւնը լեզուում նոր բառեր կազմելու եւ ստեղծելու բոլոր համակարգերի ու ենթահամակարգերի ներդաշնակ գործադրումն է՝ որպէս գերհամակարգ, որը ներառում է բառակազմութիւնը եւ բառաստեղծումը՝ որպէս բառապաշարի հարստացման եղանակներ. այն անդադրում ու անընդհատ գործընթաց է: Բառակերտութիւնը նաեւ ներլեզուական համակարգերի օրինաչափութիւնների գործադրման արդիւնք է: Լեզուի լայնածաւալ բառապաշարի ձեւաւորման ընթացքը իւրաքանչիւր լեզուի քննութեան կարեւորագոյն խնդիրներից է: Նրա արդիւնաւէտ կատարելագործումն ու հարստացումը բառակերտութեան միջոցներին եւ եղանակներին տիրապետելն է: Վերջիններս ամէն լեզուում տարաբնոյթ են եւ իւրայատուկ դրսեւորում ունեն. անգամ լեզուի տարբեր գոյավիճակներում տարբեր արդիւնաւէտութիւն են դրսեւորում: Բառակերտութեան գործընթացում ձեւաւորւում է ընդհանուր համակարգ՝ իր ենթահամակարգերով, որը դառնում է տուեալ լեզուական ամբողջական համակարգի օղակներից, տարրերից մէկը:

Նոր հասկացութիւնների անուանումների ի յայտ գալը իրականացւում է լեզուի տարամակարդակ միջոցների գործադրումով, եւ բառակերտումը հանդէս է գալիս իւրայատուկ համակարգող դերով՝ իր մէջ ներառելով լեզուի կառուցուածքի ձեւական միջոցների եւ միմեանց հետ յարաբերուող բազմաբնոյթ այլ ենթահամակարգերի մի բարդ ամբողջութիւն՝ միաժամանակ կանոնաւորելով տուեալ լեզուին յատուկ բառակազմական կաղապարներն ու եղանակները եւ բառաստեղծման ուղիները: Թէ բառակերտութեան ո՛ր կաղապարներն ու եղանակները, միջոցներն ու ձեւերը կը դառնան գերիշխող այդ համակարգում՝ կախուած է տուեալ լեզուի կառուցուածքից եւ լեզուատիպից, ինչպէս նաեւ բառակերտական ներհամակարգային բազմաբնոյթ միաւորների ու տարրերի փոխյարաբերութիւնից եւ փոխպայմանաւորուածութիւնից: Մասնաւորապէս, այս ամէնով է իրականացւում բառակերտութիւնը եւ բառապաշարի կատարելագործումը, որը իւրաքանչիւր լեզուի կենդանութեան գոյնն է, նրա ժողովրդի պատմութիւնն ու լեզուի հաղորդակցական գործառոյթի ապահովման տարրերից մէկը: Բառակերտութիւնը ոչ միայն առնչւում է լեզուում նոր հասկացութիւններին տրուող անուանումների ի յայտ գալու, այլեւ դրանց

կաղապարների, եղանակների, միջոցների, զանազան տարրերի, ընդհանրապէս, այդ համակարգի պահպանման ու գործառման պահանջին: Կենդանի լեզուում բառակերտութեան գործընթացները երբեք չեն դադարում: Դրանք արտացոլում են անընդհատ փոփոխուող շրջապատող աշխարհը եւ այդ ամէնը անուանելու մարդկանց գործնական պահանջը:

ԳԾԱՅԻՆ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Բառակազմութիւն եզրոյթը մենք գործածում ենք գծային բառի առդրութեամբ՝ գծային բառակազմութիւն: Հայերէնի բոլոր գոյավիճակներում նոր բառեր կազմելու առաւել տարածուած տեսակը գծայինն է. այն նաեւ հայերէնի բառապաշարի հարստացման հիմնական միջոցն է: Նոր բառեր կազմելու այս տեսակը կատարւում է միայն հիմնական եւ բառակազմական ձեւոյթների միջոցով, ըստ այդմ էլ՝ կարելի է այն անուանել նաեւ ձեւոյթային բառակազմութիւն՝ տարբերակելով հետեւեալ տեսակները.

1. **Ածանցային բառակազմութիւն**. սա կատարւում է բառակազմական երկրորդական ձեւոյթների միջոցով՝ ստեղծելով ածանցաւոր բառեր հետեւեալ տարատեսակներով.

ա) նախածանցային բառակազմութիւն, օրինակ՝ համ+երթ, յար+աճ, գեր+խաղ, գեր+աստղ, փոխ+եզր, տար+ա+դրամ:

բ) վերջածանցային բառակազմութիւն, օրինակ՝ արժ+ոյթ, դիտ+որդ+ական, թու+այն+աց+ում, նշ+ան+ակ, աւագ+անի:

2. **Արմատներով բառակազմութիւն**. սա կատարւում է հիմնական ձեւոյթների միջոցով՝ ստեղծելով բարդ բառեր[9], օրինակ՝ վարկ+ա+նիշ, հարց+ա+հանդէս, կենս+ա+գոյ, մարտ+արուեստ, բեմ+աշխարհ, լր+ա+հեն, երկ+սակ+ա+գին, ընթաց+ա+հաշիւ, ճեպ+ա+ժողով:

3. **Ածանցարմատային բառակազմութիւն**. սա կատարւում է հիմնական եւ բառակազմական երկրորդական ձեւոյթների զուգորդումով՝ ստեղծելով բարդածանցաւոր բառեր, օրինակ՝ համ+ա+գործ+ա+կց+ում, ջերմ+ոց+ա+ծին, պաշտօն+ա+վաճառ+ութիւն, այլ+ընտր+անք+ային, բազմ+ա+կարծ+ութիւն, գաղափար+ա+գեղ+ա+գիտ+ական:

Ինչո՞ւ գծային եւ ինչո՞ւ բառակազմութիւն:

Նախ՝ գծային, որովհետեւ հիմնական ձեւոյթին կամ բառին գծային զարգացման եղանակով (ուղիղ գծի տեսքով) կցւում են նորանոր մասնիկներ, որոնք փոխում են նախկինի է՛ւ ձեւական կողմը (գծային բառակազմութեան ժամանակ ձեւական տեսակէտից ստեղծւում են նոր բառեր), է՛ւ բովանդակութիւնը, իհարկէ, նաեւ խօսքիմասային պատկանելութիւնը, օրինակ՝ հակ+ա+քայլ, խօսն+ակ, հանր+ոյթ,

ծր+ա+գր+ա+վար, եռ+ա+նախ+ա+գահ, եթեր+ա+շրջ+ան, եվր+ա+պատգամ+աւոր, եռ+արժ+ոյթ, գործ+ա+տու:

Բառակազմութիւն, որովհետեւ հայ լեզուաբանութեան մէջ աւանդաբար այս եզրոյթի բովանդակութիւնն արտացոլում է նշուած եղանակներով նորանոր բառերի կազմութիւնը[10]:

ՈՉ-ԳԾԱՅԻՆ ԲԱՌԱՍՏԵՂԾՈՒՄ

Բառաստեղծում եզրոյթը մենք գործածում ենք ոչ-գծային բառի առդրութեամբ՝ ոչ-գծային բառաստեղծում: Ինչո՞ւ ոչ-գծային եւ ինչո՞ւ բառաստեղծում:

Նախ՝ ոչ-գծային եզրոյթն առաջարկւում է՝ ի հակադրութիւն գծայինի: Այն արտացոլում է նաեւ երեւոյթի էութիւնը: «Նոր» բառը արտայայտութեան դիտուածքում չի տարբերակւում «հնից». այն ունի հնչոյթային նոյն կազմը, որեւէ արտաքին ձեւափոխութիւն չի կրում: Այս բառի կրած փոփոխութիւնները խորքային են, վերաբերում են բառի բովանդակութեան կտրուածքին, օրինակ՝ յենակէտային (եղել է «յենակէտին վերաբերող՝ յատուկ» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «յենակէտային դիրքում խաղացող ֆուտբոլիստ» գոյական), երկրապահ (եղել է «երկիր պահող» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «հայրենիքը պաշտպանող անձ, ֆիդայի» գոյական), խլացուցիչ (եղել է «խլացնող» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «աղմուկը խլացնող սարք» գոյական), գրոհային (եղել է «գրոհին վերաբերող՝ յատուկ» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «գրոհին մասնակցող զինուոր» գոյական):

Բառաստեղծում, որովհետեւ եթէ բառակազմութեան միջոցով ստեղծուած նոր բառը տարբերւում է ե՛ւ արտայայտութեան, ե՛ւ բովանդակութեան առումով, ապա այս դէպքում՝ միայն բովանդակութեան առումով, օրինակ՝ նախագահական (եղել է «նախագահին վերաբերող՝ յատուկ» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «նախագահի նստավայր» գոյական), ընդդիմադիր (եղել է «ընդդէմ» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «ընդդիմադիր քաղաքական գործիչ» գոյական): Հայ լեզուաբանութեան մէջ «բառաստեղծում» եզրն ունի աւելի նեղ նշանակութիւն, հասկացւում է այն գործընթացը, որն ընկած է նոր բառեր, բառարմատներ ստեղծելու հիմքում. հայոց լեզուի արդի գոյավիճակում գրեթէ չի գործում (սա յատուկ է լեզուի ծագման, նախնական կազմաւորման գոյավիճակին): Երբեմն էլ հայագիտութեան մէջ «բառակազմութիւն» եւ «բառաստեղծում» եզրոյթերը հանդէս են գալիս որպէս նոյնանիշներ[11]: Նոր բառեր կերտելու այս եղանակի դէպքում, չնայած չի փոխւում բառի հնչոյթային կազմը (բառի արտաքին տեսքը, ձեւը), սակայն էական փոփոխութեան են ենթարկւում նրա քերականական յատկանիշները (ձեւաբանական, շարահիւսական առանձնայատկութիւնները), իհարկէ, նաեւ

բառիմաստը, օրինակ՝ ձեռներէց (եղել է «գործունեայ, նախաձեռնող» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «գործարար անձ» գոյական), կրիչ (եղել է «կրող» իմաստով ածական, այսօր նաեւ՝ «համակարգչային տեղեկատուութիւնը ամբարող սարք» գոյական): Այս դէպքում բառակերտութեան միջոց է հանդիսանում բառի յարացուցային ամբողջ համակարգը (որոշ խօսքի մասերի համար, իսկ այլ խօսքի մասերի համար նրանց արտայայտած խօսքի մասային ընդհանուր քերականական իմաստը), որի միջոցով եւ ուղեկցութեամբ անցում է կատարւում քերականական մի կարգից միւսին: Ոչ-գծային բառաստեղծումը հայերէնի քերականագիտութեան մէջ ընդունուած խօսքիմասային փոխանցումն է, որ լեզուի բառապաշարում՝ յատկապէս խօսքիմասերի համակարգում, մշտապէս տեղի ունեցող տեղաշարժերի պատճառ է հանդիսանում, սակայն մենք գործածում ենք աւելի լայն եւ ընդգրկուն իմաստով:

Ոչ-գծային բառաստեղծմամբ բառակերտական միաւորների առկայութիւնը հայերէնում գիտական մեկնաբանութեան կարիք ունի. այս երեւոյթը իբրեւ լեզուակառուցում դիտարկելիս կ'ընդգծուի ոչ միայն հայերէնում նոր բառերի առաջացման (բառակերտութեան) այդ տեսակի արձանագրումը, այլեւ ներլեզուական միաւորների փոխյարաբերութեան ու փոխպայմանաւորուածութեան, հայերէնի բառակերտութեան համակարգերի հնարաւորութիւնների ընդլայնման աւելի լիարժէք ճանաչման անհրաժեշտութիւնը: Լեզուական այս երեւոյթի օրինաչափութիւնների ու իւրայատկութիւնների քննութիւնը նաեւ կարեւորւում է հայերէնում բառակերտութեան այս եղանակի արդիւնաւէտութեամբ:

Հայագիտութեան մէջ լեզուական այս երեւոյթին ուշադրութիւն դարձուել է եւ քննուել է այլ՝ փոխանունութեան, խօսքիմասային փոխանցումների, ոչ-նիւթական խօսքիմասերի բառակազմի հարստացման հարթութիւններում, բայց ոչ՝ բառակերտական համակարգում[12]: Որպէս բառակերտութեան համակարգի ենթահամակարգ՝ ոչ-գծային բառաստեղծման ընդհանուր տեսութեան եւ նրա մասնաւոր դրսեւորումների քննութիւնը շատ է կարեւորւում, քանի որ լեզուական այս երեւոյթը յատուկ է աշխարհի շատ լեզուներին. սա համալեզուական իրողութիւն է եւ հայերէնում նոյնպէս ունի իր համակարգուած դրսեւորումը: Այլ լեզուների լեզուական իրողութիւններից ելնելով՝ բառակերտութեան այս տեսակը մի կողմից կարելի է դիտել որպէս համաժամանակեայ (յատկապէս բայացումը անգլերէնում), օրինակ՝ a film («կինօնկար»՝ գոյական)- to film («էկրանաւորել»՝ բայ), an elbow («արմուկ»՝ գոյական) to elbow («արմուկներով ճանապարհ բացել»՝ բայ) a photograph («լուսանկար»՝ գոյական) to photograph («լուսանկարել»՝ բայ), իսկ միւս կողմից՝ տարաժամանակեայ երեւոյթ (մասնակի գոյականացումը ռուսերէնում,

օրինակ՝ столовая комната (ճաշելու սենեակ)-столовая (ճաշասենեակ), выходной день (ազատ օր)- выходной (հանգստեան օր), военный человек (զինուորական մարդ)-военный (զինուորական)[13]:

Հայերէնի տեսանկիւնից՝ լեզուական փաստերը ցոյց են տալիս, որ ոչ-գծային բառաստեղծումը ունի ընդգծուած պատմական բնոյթ: Քանի որ ոչ-գծային բառաստեղծումը անմիջականօրէն առնչւում է բառի բովանդակութեան առումով կատարուող բազմաբնոյթ փոփոխութիւնների հետ (բառիմաստ եւ քերականական առանձնայատկութիւններ), ուստի անհրաժեշտ է որոշակի պատմական ժամանակահատուած, որպէսզի նոր խօսքիմասային արժէք(ներ)ը ամրանա(ն) տուեալ հնչոյթային ձեւում, առաւել եւս՝ հասարակայնօրէն գիտակցուի: Յաճախ այդ գործընթացը ընդգրկում է լեզուի տարբեր փուլերը՝ տարաժամանակեայ (գրաբար, միջին հայերէն, արդի հայերէն) կամ միայն մէկ փուլը՝ համաժամանակեայ ոչ-գծային բառաստեղծում:

Հայերէնի բառապաշարի պատմական քննութիւնը ցոյց է տալիս, որ ներկայ կամ ժամանակակից փուլում գործող ոչ-գծային բառաստեղծմամբ բառերի մի մասը գործածւում է գրաբարից ի վեր, օրինակ՝ (ածական>ածական//գոյական) կաճառական, շրջաբերական, ընծայական, կապալառու, բանսարկու, թշուառ, արտաքին, հեղուկ, արու, վարձառու, ծիրանաւոր, օրհներգու, ազդարար: Կան եւ նոյն բնոյթի բառեր, որոնք գործածւում են միջին հայերէնից ի վեր (պապական, բարձրախօս, կաշառակեր, տափակաքիթ, մահմեդական, ծծմբահոտ, այլադաւան): Որպէս միարժէք կամ տարարժէք (այդ փուլում են ենթարկուել ոչ-գծային բառաստեղծման) այս բառերը պահպանուել են արդի հայերէնում տարարժէքութեան տարբեր դրսեւորումներով: Ոչ-գծային բառաստեղծմամբ բառերի միւս մասը ստեղծուել է ժամանակակից հայերէնում՝ այնուհետեւ ենթարկուելով ոչ-գծային բառաստեղծման: Ըստ այդմ էլ, ելակէտ ընդունելով ժամանակակից հայերէնի փուլը, տարբերակում ենք տարաժամանակեայ ոչ-գծային բառաստեղծմամբ բառեր (գրաբարից եւ միջին հայերէնից ի վեր) եւ համաժամանակեայ ոչ-գծային բառաստեղծմամբ բառեր (ժամանակակից հայերէնի փուլի):

Ինչպէս ուրիշ համակարգերի, այնպէս էլ լեզուական համակարգի զարգացումը հակադրութիւնների պայքարի արդիւնք է: Լեզուական համակարգի զարգացումը ապահովող այդպիսի հակադրութիւն է լեզուի տնտեսման եւ յաւելուրդութեան գործօնը: Ոչ-գծային բառաստեղծման համակարգում նոր բառերի կերտման գործում, յատկապէս լեզուի տնտեսումը մեծ դեր է կատարում, իսկ յաւելուրդութիւնը՝ խանգարիչ: Այսպէս, ածական – գոյական կայուն կապակցութեան կրճատումը ոչ-գծային բառաստեղծման հիմքերից է: Հայոց լեզուի պատմական զարգացման ըն-

թացքում յաճախ որեւէ ածական եւ գոյական որոշակի ժամանակաընթացքում գործածւում են միասին, եւ ստեղծւում է որոշիչ–որոշեալի մի իւրօրինակ կայուն կապակցութիւն: Եւ քանի որ տուեալ ածականը վերաբերում է բացառապէս նոյն գոյականին, լեզուի խնայողութիւնից ելնելով, աւելորդ անգամ տուեալ գոյականը չգործածելու եւ չկրկնելու համար գոյական որոշեալը դուրս է ընկնում, եւ ածական որոշիչը ներառում է նաեւ գոյականի իմաստը: Որոշ կապակցութիւններ կարող են աւելի երկար գործածուել ածական – գոյական կաղապարով, միւսները՝ աւելի կարճ ժամանակով: Այդպիսի երկարժէք բառերը սովորաբար մէկ իմաստով են տարարժէք, օրինակ՝ բիկական գործիչ>բիկական, ծրիչ սարք>ծրիչ, կերպարար մասնագէտ>կերպարար եւն.: Ածական>ածական//գոյական ոչ-գծային բառաստեղծման կաղապարով ժամանակակից հայերէնում նոր բառեր են, օրինակ՝ ժառանգական, հիկական, երիտթեւային, հակական, սերժական, լեւոնական եւն.:

Շատ հետաքրքիր է, թէ ինչու է կրճատւում գոյական որոշեալը եւ ոչ թէ ածական որոշիչը: Նախ՝ բառերի գոյականացումը շատ աւելի սովորական երեւոյթ է լեզուում, քան ածականացումը: Լեզուում իւրաքանչիւր լեզուական միաւոր՝ հնչոյթից մինչեւ նախադասութիւն, կարող է գոյականաբար գործածուել՝ ինքնանուանողական դերով, եւ, վերջապէս, եթէ կրճատուի ածական որոշիչը, բառակապակցութեան երկրորդ անդամը՝ գոյական որոշեալը, ոչ մի իմաստային փոփոխութիւն չի կրի. ուղղակի տեղի կ'ունենայ ածականի բացթողում, եւ դա ոչ մի ձեւով չի անդրադառնայ գոյականի արժէքի վրայ. այն չի կարող ներառել ածականի իմաստը: Իսկ հակառակ դէպքում դպրոցական երեխայ կապակցութեան մէջ, երեխայ գոյականը կրճատուելով՝ դպրոցական բառը ներառում է երեխայ բառի իմաստը եւ քերականական յատկանիշները, եւ միայն այս իմաստով է այն երկարժէք, իսկ այլ կապակցութիւններում (դպրոցական համազգեստ, դասագիրք) այն միայն ածական է: Իսկ ինչո՞ւ է կրճատուել դպրոցական երեխայ եւ ոչ թէ դպրոցական դասագիրք կապակցութիւնը: Նկատելի է, որ աւելի շատ կրճատւում են անձեր ցոյց տուող գոյականները (բայց նաեւ՝ կործանիչ ինքնաթիռ>կործանիչ), եւ ստեղծւում են անձի հասարակ անուններ ցոյց տուող երկարժէք բառեր: Այստեղ մեծ դեր կարող են ունենալ գործածման յաճախականութիւնը եւ կապակցելիութեան դիւրութիւնը, ինչպէս նաեւ լեզուն կրողի լեզուամտածողութիւնը եւ հոգեբանական գործօնը: Ոչ-գծային բառաստեղծմամբ առաջացած այս բառերի իմաստային դաշտում առկայ է ընդգծուած յատկանշային՝ տեսակային իմաստը (սեռի եւ տեսակի յարաբերութիւնը՝ երթուղային տաքսի>երթուղային եւն.)՝ ի տարբերութիւն սովորական գոյականների՝ քար, դպրոց, գիրք եւն.:

Ինչեւէ, հայերէնի պատմական զարգացման գործընթացում բառակերտութեան համակարգը՝ իր բոլոր ենթահամակարգերով՝ գծային բառակազմութիւն, ոչ-գծային բառաստեղծում, նաեւ փոխառութիւնները ծառայել են բառապաշարի ձեւաւորմանը եւ կատարելագործմանը՝ իր ազգային, ընկերային, գործառական, տարիքային, մասնագիտական եւ այլ դրսեւորումներով՝ դարձնելով այն բազմաբովանդակ ու յարաշարժ մի հսկայածաւալ զանգուած: Սակայն իւրաքանչիւր լեզուի բառապաշար լեզուական ամբողջական համակարգի մի օղակ է, որն ապահովում է նրա կենդանութեան գոյը: Լեզուն՝ իր ամբողջական կառուցուածքով ու համակարգերով, կոչուած է՝ կատարելու իր հիմնական՝ հաղորդակցական գործառոյթը, որպէսզի ծառայի մարդկային հասարակութեանը՝ դառնալով նրա մշտական ու անբաժան ուղեկիցը եւ յարատեւութեան ու յաւերժութեան վկան:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայ լեզուաբանական գրականութեան մէջ 'onomasiology' եւ 'onomastics' եզրոյթների տարբերակման համար կիրառելի են համապատասխանաբար՝ *անուանագիտութիւն* եւ *յատկանուանագիտութիւն* եզրերը:

[2] Ալեքսանդր Մարգարեան, *Ժամանակակից Հայոց Լեզու*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ. 1993, էջ 130:

[3] Էդուարդ Աղայեան, *Ընդհանուր Եւ Հայկական Բառագիտութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1984, էջ 109:

[4] Էդուարդ Աղայեան, *Լեզուաբանութեան Հիմունքներ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1987, էջ 413:

[5] Արտաշէս Մարտիրոսեան, *Արդի Հայերէնի Նորաբանութիւնների Բառակազմական Կաղապարները*, Երեւան, «Էդիթ Պրինտ» Հրատ., 2007, էջ 5-193:

[6] Բառակերտութեան հարցերի քննութիւնը հայերէնագիտութեան մէջ սկսւում է Դիոնիսիոս Թրակացու քերականութեան թարգմանութեան շրջանից: Յետագայ հայ լեզուաբանները խորացրել, ընդլայնել են խնդրի հարցադրումները: Ուշագրաւ են խնդրոյ առարկայի վերաբերեալ Հրաչեայ Աճառեանի, Մանուկ Աբեղեանի, Աղայեանի, Գէորգ Ջահուկեանի, Սերգէյ Գալստեանի, Լիանա Յովսէփեանի եւ ուրիշ երախտաւորների մօտեցումները (աւելի մանրամասն տե՛ս՝ Աշոտ Հայրապետեան, *Ոչ-Գծային Բառաստեղծումը Հայերէնում*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2011, էջ 12-20):

[7] Հրանտ Պետրոսեան, *Հայերէնագիտական Բառարան*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1987, էջ 108-109:

[8] Նոյն:

[9] Արդի լեզուաբանութեան մէջ յապաւումը՝ իբրեւ բառակազմական նորագոյն եղանակ, բառաբարդման մի տեսակ է համարւում:

[10] Պետրոսեան, էջ 108:

[11] Նոյն:

[12] Ոչ-գծային բառաստեղծումը կիսաբառային, կիսաքերականական բնոյթ ունի, քանի որ այն մի կողմից հարստացնում է բառապաշարը, միւս կողմից առնչւում է լեզուի քերականական կարգերին:

[13] Հայերէնի առանձնայատկութիւններից կախուած՝ բայերը հայերէնում ստեղծ-ւում են միայն բառակազմական միջոցներով, եւ խօսքիմասային փոխանցումը այստեղ որեւէ դեր չունի: Զահուկեանը բայացման երեւոյթը անուանում է փոխակերպում, երբ մի խօսքի մասը փոխակերպւում է միւսի՝ արտաքին բառակազմական յատուկ միջոցներով, օրինակ՝ կղզի–կղզիանալ, ամայի-ամայանալ եւն. (Գէորգ Զահուկեան, *Ժամանակակից Հայերէնի Տեսութեան Հիմունքները*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., էջ 505): Բայացումը հայերենում գծային բառակազմութեան տեսակ է:

WORD FORMATION AS A MEANS TO REALIZE THE COMMUNICATIVE FUNCTION OF LANGUAGE
(SUMMARY)

ASHOT HAYRAPETYAN

Human society is unable to live and invent without communication and information exchange and without the necessary means to realize its aims. The last decades of the 20th century and especially the 21st century are considered to be the most dynamic phases in the development of society. The West and its culture, its free market economy, socio-political developments, and technological progress, have been reflected in diverse new notions, which have appeared in the vocabulary of languages.

The author argues that language as a basic means of human communication is an entity that has an interrelated system of words, word stock and grammatical structures. The author underlines the fact that language as a means of communication is prone to dying out unless it is enriched with new words that reflect the new developments of life and society. Indeed, what would happen to a language if it failed in transmitting the ideas of people to each other and stopped being a mean of conveying information and feelings from one person to another?

Finally, the author denotes two methods of word formation for the Armenian language: linear/morphemic, which for centuries has been a dominant tool for enriching and enlarging the Armenian vocabulary, and nonlinear/inner which is the result of a specific modification of meanings, morphological features and syntactic applications of the word. A third track of enriching Armenian has been borrowing words from other languages.